ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ք. Վանաձոր, ՀայքիՀրապարակ 1

☎/0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ_____

« _____» _____ 2019թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ձեր 24.09.2019. գրությանը

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր կողմից նշված հղմանը նախորդող տեքստը գրվել է՝ հիմք ընդունելով Էլեկտրոնային հարցումների միասնական e-request հարթակում տեղ գտած գրառումը (հարթակը սպասարկվում է ՀՀ կառավարության կողմից):

Հարցումն ստանալուց հետո Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքէջի պատասխանատուի կողմից Ձեր կողմից նշված հատվածում արվել է համապատասխան փոփոխությունը՝ ավելացնելով հղումը և տեղեկացվել է e-request հարթակի պատասխանատուին՝ հարթակում ևս համապատասխան փոփոխությունն իրականացնելու և տեխնիկական խնդիրը կարգավորելու համար:

Տեղեկացնենք նաև, որ քաղաքացիները ցանկացած ձևով(առցանց կամ առձեռն)դիմումը ներկայացնելու պարագայում Լոռու մարզպետարանի Քարտուղարության կողմից դիմումը ընդունելուց հետո, աշխատակցի առաջարկությամբ ստանում են(կամ կարող են ստանալ) 16 նիշանոց պայմանանիշը, որը տեղադրելով Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքէջի ստորին ձախ հատվածում տեղակայված «Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ», ապա նաև՝ «Հետևեք դիմումի, հարցման կամ բողոքի ընթացքին» պատուհաններին հաջորդող համապատասխան հատվածում, կարող են հետևել իրենց դիմումների ընթացքին: Քաղաքացիները կարող են նաև նշված հարթակի միջոցով նամակ կամ դիմում գրել, որոնց ընթացք կտրվի օրենքով սահմանված կարգով:

Հարգանքով՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Կատ. Ա.Գասպարյան